

ԳՐԵԼՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՆՆՍՄԱՆՈՒԹՅՈՒՆ

### ԱՐԺԵՔԱՎՈՐ ՆԱԽԱՁԵՆՆՈՒԹՅՈՒՆ

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակչությամբ լույս է տեսել Ս. Մանուկյանի «Ժողովուրդների բարեկամության արտացոլումը սովետահայ գրականության մեջ» աշխատությունը: Հեղինակը հանդես է բերել իրախուսելի նախաձեռնություն՝ ձեռնամուխ լինելով այնպիսի կարևոր թեմայի մշակմանը, ինչպիսին է ժողովուրդների բարեկամության արտացոլումը սովետահայ գրականության մեջ: Սովետական պետության հզորության ու կենսունակության անսպառ աղբյուրը, սոցիալիստական հասարակության դարգացման հզոր շարժիչ ուժը հանդիսացող ՍՍՌԻ ժողովուրդների անսասան բարեկամությունը չի կարող չհանդիսանալ շնորհակալ թեմա՝ դրողի, արվեստագետի համար: Այդ պատճառով կոմունիզմ կերտող սովետական ժողովուրդների անխախտ բարեկամության ղեկավարվածության վերարտադրման բնագավառում ձեռք բերված նվաճումների գիտական խորը վերլուծությունը, այնպիսի կարևոր հարցերի մշակումը, ինչպիսին է, թե գրողը ստեղծագործական ինչ եղանակների պետք է գիտի, որպեսզի այդ բարեկամության վեճ ու ազնիվ գաղափարը մարմնավորի գեղարվեստական լիարժեք պատկերի մեջ, ստեղծի ժողովուրդների բարեկամությունը նվիրված՝ գաղափարապես հանդեպված, գեղարվեստական բարձրարժեք գործ, որը նպաստի աշխատավորների ինտերնացիոնալ դաստիարակության մեծ դրոժին, ունի բացառիկ կարևոր նշանակություն:

Ընկ. Սարիբեկ Մանուկյանի աշխատությունը գալիս է որոշ շարժիչ լրացնելու այն բացը, որ գոյություն ունի գեղարվեստական գրականության մեջ ժողովուրդների բարեկամության արտացոլման ուղղությամբ կատարված աշխատանքի գիտական ընդհանրացման, գրականության մեջ այդ թեման գաղափարական և գեղարվեստական բարձր մակարդակով վերարտադրելու կոնկրետ ուղիների մշակման ասպարեզում: Կրախուսվող գրքում տրվում է հայ գրականության մեջ ժողովուրդների բարեկամության արտացոլման համառոտ տեսությունը: Հեղինակը իրավամբ հիշատակում է, որ հայ գրականության մեջ պրոլետարական ինտերնացիոնալիզմը ու ժողովուրդների եղբայրական բարեկամությունը իր ցայտուն արտահայտությունն է գտել, ամենից առաջ, պրոլետարական մեծ երդիչ Հակոբ Հակոբյանի ստեղծագործություններում: Հայ մեծ բանաստեղծի դեռևս առաջին ռուսական ռեպուբլիկայի տարիներին գրած երգերը խոշոր գեր են կատարել Անդրկովկասում աշխատավորների սրբուխարական ինտերնացիոնալիզմի, եղբայրական բարեկամության ու համերաշխության ոգով դաստիարակելու, ցարիզմի ու կապիտալիզմի դեմ նրանց ռեպուբլիկոն ուժերն ու եռանդը մորթիլիցանելու, ամեն տեսակի ճշմարիտ ազատ հասարակարգ ստեղծելու համար մղվող պայքարում: 1905 թ. ռեպուբլիկայի տարիներին աշխատավորությանը պրոլետարական ինտերնացիոնալիզմի ոգով գաստի-սրակելու ուղղությամբ նշանակալի դեր են խաղացել նաև գրողներ՝ Մաղաթ Պետրոսյանը, Արազին, Ան. Վարդանյանը, Նուշանիկ Կուրդիյանը և ուրիշները: Հայ խոշոր բանաստեղծ Հակոբ Հակոբյանը և մյուս հայ գրողները իրենց երկերում գեղարվեստական խոսքի հատու ուժով մերկացնում էին հայ ժողովրդի ռեպուբլիկոն թշնամիները գաղափարներին և այլ դույնի բուրժուական նացիոնալիստներին, որոնք սերտանում էին ազգային թշնամանք ժողովուրդների միջև, փորձում էին կազմալուծել բանվոր դասակարգի շարքերի միասնությունը: Առաջին ռուսական ռեպուբլիկայի տարիներին բոլոր ազգերի աշխատավորների եղբայրական բարեկամության ու ինտերնացիոնալ համերաշխության գաղափարը իր գեղարվեստական արտացոլումն է դտնում նաև հայ գրականության նշանավոր ներկայացուցիչներ Ավ. Իսահակյանի, Հովհ. Թումանյանի, Վահան Տերյանի, Ալ. Մատուրյանի, Վ. Փափազյանի, Ալ. Շիրվանզադեի երկերում:

Կրախուսվող գրքում հանգամանորին լուսարանվում են Հակոբ Հակոբյանի «Հավասարություն» պոեման, որ սողորված է ժողովուրդների եղբայրության ու հավասարության, բոլոր ազգերի աշխատավորների բարեկամության ու համերաշխության վաճմ գաղափարներով, հայ խորագրույն բանաստեղծ Սղիշն Զարենցի՝ դեպի ռուս մեծ ռեպուբլիկոն ժողովուրդը անհուն սիրտ և նվիրվածության ջերմ զգացմունքներով համակված «Ծրգ ժողովրդի մասին» և այլ բանաստեղծությունները: Հայ անվանի գրողները իրենց երկերում արտահայտել են անհուն երախտագիտու-

թյուն ոուս մեծ ժողովրդին, նրա ռևոլյուցիոն բանվոր դասակարգին, ճնշված ժողովուրդներին՝ ազատագրման ասպարեզում նրա ցուցարեւած հերոսական ջանքերի համար: Ժողովուրդների բարեկամության գաղափարը պաշտպանում ու պրոպագանդում էր հայ խոշորագույն լատինատեղծ Հովհ. Թումանյանը, որը ջերմորեն պաշտպանեց Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան և Սովետական իշխանության հաստատումը Անդրկովկասում:

Հայ առաջավոր գրողներն իրենց երկերում պրոպագանդում էին այն հիմնական գաղափարը, որ միայն ոուս ժողովրդի և ցարական Ռուսաստանի բոլոր ազգերի աշխատավորների համատեղ ռևոլյուցիոն պայքարը կարող է ապահովել շահագործողական կարգերի տապալումը և բանվորների ու գյուղացիների իշխանության հաստատումը: Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան հաղթանակեց, որովհետև Ռուսաստանի պրոլետարիատը բուրժուական կարգերի դեմ իր մղած հերոսական պայքարում հենվում էր բոլոր ազգերի աշխատավորների անձնավոր պաշտպանության ու օգնության վրա: Սովետական իշխանությունը արմատախիլ անելով ցարիզմի ազգային քաղաքականությունը, ապահովեց բոլոր ազգերի իրավահավասարությունը հասարակական կյանքի բոլոր բնագավառներում և դրանով իսկ վիթխարի շափով գարկ տվեց ժողովրդական մասսաների ինտերնացիոնալ զգացմունքներին: Մեր երկրում սոցիալիզմի հաղթանակի շնորհիվ յիկվիդացվեց նախկինում ճնշված ժողովուրդների տնտեսական և կուլտուրական հետամնացությունը և ապահովվեց մեր երկրի բոլոր ժողովուրդների տնտեսական և կուլտուրական աննախընթաց վերելքը:

Հասկանալի է, որ նոր իրադրության մեջ սովետահայ գրողները գեղարվեստական խոսքի ավելի մեծ ուժով «կեսցին վերարտադրել ժողովուրդների եղբայրական բարեկամությունը և սերտ համագործակցությունը սոցիալիստական հասարակարգի կառուցման գործում: Գրախոսվող գրքում տրվում է Ավ. Իսահակյանի, Հակոբ Հակոբյանի, Գ. Գեմիրճյանի, Ե. Չարենցի, Ստ. Զորյանի, Մ. Արագու, Վ. Ալազանի, Գ. Մահարու, Ն. Զարյանի, Գեղամ Սարյանի, Ա. Վըշտունու և ուրիշ գրողների այն ստեղծագործությունների համառոտ տեսությունը, որոնք նվիրված են ժողովուրդների բարեկամությանը: Գրքում առանձնապես ընդգծվում է Ե. Չարենցի «Ամենապոեմի» բացառիկ կարևոր նշանակությունը, երկ, որի մեջ գեղարվեստական մեծ պաթոսով ցույց է տրվում ոուս մեծ ժողովրդի դերը ցարական Ռուսաստանի ժողովուրդների՝ այդ թվում և հայ ժողովրդի ազատագրման գործում: Ականավոր պարտիական ու պետական գործիչ Ալ. Մյասնիկյանը ընդգծելով այն փաստը, որ սովետահայ գրականության կարևորագույն թեմաներից մեկն է դառնում ժողովուրդների բարեկամությունը, գրում էր. «Ինչ շնորհակալ նյութ է սա գեղարվեստի համար»:

Գրախոսվող գրքում տրվում է նաև սովետահայ գրողների ավելի կրտսեր սերնդի ներկայացուցիչների այն ստեղծագործությունների վերլուծությունը, որոնք արտացոլում են արդեն սոցիալիստական հասարակարգի դարգացման հզոր շարժիչ ուժ դարձած ժողովուրդների անխախտ բարեկամությունը, սոցիալիստական շինարարության ասպարեզում: Գրքում առանձնապես ընդգծվում է պոետներ՝ Հ. Շիրազի, Բորյանի, Աղավնու, Սարմենի, Վ. Գրիգորյանի և Ս. Կապուտիկյանի գրած «Ողբայրական ուսպուրիկաների ժողովուրդներին» — նամակ-բանաստեղծության՝ իբրև ժողովուրդների բարեկամությանը նվիրված կարևոր երկի նշանակությունը:

Գրքում բատ արժանավույն գնահատվում են մեր յայնարձակ սոցիալիստական հայրենիքի գանազան ժողովուրդների ազգային տրադիցիաներին նվիրված ձոներն ու ներբողները, պատմա-ուսույցիոն թեմայով գրված երկերը, որոնք նույնպես նշանակալի դեր են խաղում աշխատավորներին պրոլետարական ինտերնացիոնալիզմի և ժողովուրդներին եղբայրական բարեկամության ոգով դաստիարակելու գործում: Գրքի հեղինակը այս կապակցությամբ կարևոր նշանակություն է տալիս սովետական ժողովուրդների բանահյուսական նյութերի գեղարվեստական մշակման հարցերին:

Գրքում տրված է Հայրենական պատերազմին նվիրված սովետահայ գրականության շատ երկերի վերլուծությունը, երկեր, որոնք անդնահատելի դեր խաղացին նենդ թշնամուն ջախջախելու, սոցիալիստական հայրենիքը պաշտպանելու համար ժողովրդի ուժերը մորիլիզացնելու, նրանց աշխատանքային և մարտական սխրագործությունների կոչելու գործում:

Գրախոսվող գրքի վերջին մասում յուսարանվում է սովետահայ գրողներ՝ Ա. Իսահակյանի, Ն. Զարյանի, Գեղամ Սարյանի, Շիրազի, Հ. Սարյանի, Սարմենի և շատ այլ գրողների այն ստեղծագործությունները, որոնց առաջատար մոտիվը հանդիսանում է ժողովուրդների բարեկամությունը և որոնք հետապնդում են շնորհակալ նպատակ՝ մեր աճող երիտասարդ սերունդը յաստիարակել պրոլետարական ինտերնացիոնալիզմի ոգով:

II. Մանուկյանը խրախուսելի և շնորհակալ գործ է կատարել, հրապարակելով «Ժողովուրդների բարեկամության արտացոլումը սովետահայ գրականության մեջ» աշխատությունը: Խոսք լինել չի կարող, որ քննարկվող թեմայի՝ գրականության մեջ ժողովուրդների բարեկամության արտացոլումը հարցի գիտական բազմակողմանի մշակումը կարևոր նշանակություն ունի մեր դրողների համար, որոնք աշխատում են ստեղծել այնպիսի բարձրարժեք գեղարվեստական երկեր, որոնց մեջ իր լիակատար և խորը արտացոլումը գտնի սոցիալիստական հասարակարգի զարգացման հղոր շարժիչ ուժը, մեր սոցիալիստական հայրենիքի հղորության անսպառ աղբյուրը՝ սովետական ժողովուրդների բարեկամությունը:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

### Գ. ՎԱՐԴՈՒՄՅԱՆ «ԼՈՒԵՑԻՆԵՐԻ ՆՈՐ ԿԵՆՑԱՂԸ»\*

Դերնիկ Վարդումյանի «Լուեցինների նոր կենցաղը» աշխատությունը սովետական թեմայով և առանձին գրքով հրատարակված առաջին ազգագրական գործն է: Այն բազկացած է շորս գյուղներից, որոնք ներկայացնում են Լոռու պատմա-ազգագրական համառոտ նկարագիրը, գյուղի արտադրական կենցաղը, ժողովրդի բնատանեկան հարաբերությունները և գյուղական բնակավայրերն ու շենքերը:

Պատմա-ազգագրական համառոտ ակնարկում հեղինակը նախ ներկայացնում է այն տերիտորիան ու բնակավայրերը, որտեղ գրսևորվել է Լոռու հասարակության արդի կենցաղը:

Ժողովրդի կենցաղային փոփոխությունները պայմանավորված էին պատմական այն խորը փոփոխություններով, որոնք առաջացան սևոլյուցիայից հետո տեղի ունեցած տնտեսական ու քաղաքական իրադարձությունների հետևանքով: Ահա այս խնդիրներին է, որ Վարդումյանն անդրադառնում է իր ուսումնասիրած ժամանակաշրջանը (1920—1955) բաժանելով երկու հիմնական կտավի՝ 1920—1929 թթ. և 1929—1955 թթ.: Առաջին՝ մինչկոլտնտեսային ժամանակաշրջանում, ինչպես ցույց է տալիս հեղինակը, Լոռու գյուղացիական աշխատավորությունն ապրում էր հողը կալվածատերերից ու կուլակներից բռնագրավելու պատմական պրոցեսը և աստիճանաբար անցնում է կոոպերացման նախնական ձևերին, որպիսիք էին սպառողական և արդյունահանող կոոպերացիան, գյուղատնտեսական ընկերությունները, հողօգտագործման և կնիքատնտեսական արտելները և այլն: Մանրամասն տեղեկություններ տալով գավառի կոոպերատիվ ձևերի արագ զարգացման մասին, հեղինակը հաղորդում է, որ Լոռում 1928 թվականին գյուղացիության 40 տոկոսը գտնվում էր կոոպերացիաների մեջ:

Այդ նույն թվականի ապրիլին ռեսպուբլիկայում կար 48 կոլտնտեսություն, որից շորսը պատկանում էր Լոռուն: Երկրորդ կտավի մասին խոսելիս՝ հեղինակը ուշագրավ փաստեր է բերում գյուղի դասակարգային սուր պայքարի մասին, ներկայացնում է կոմունաներ կազմակերպելու, դրանք հետագայում կոլտնտեսությունների վերածելու, վերջիններիս ամրապնդման, տնտեսապես և կուլտուրապես զարգանալու, շինարարության, գյուղի էլեկտրիֆիկացման, ՄՏԿ-ների աճման, Հայրենական պատերազմի, հետպատերազմյան շրջանում անասնապահության ու գյուղատնտեսության զարգացման մասին և այլն:

Ահա այն պատմական ֆոնը, որի վրա ուրվագծվել են ազգագրագետ հեղինակի հետազոտական աշխատանքները՝ ընդգրկելով կենցաղի առանձին ճյուղերի մեջ տեղի ունեցած փոփոխությունները:

Տուրարանշյուր կենցաղային հատված հեղինակի կողմից քննության է առնված հենի ու նորի հակադրությունների կարգով, որ արդի ազգագրական գիտության ամենալավագույն մեթոդներից մեկն է: Այս ձևով ներկայացված արտադրական կենցաղում ցույց են տրված Լոռու գաղտամշակման հին և հետամնաց ձևերը և ապա վեր են հանված մեր ժամանակների գիտության նվաճումները գյուղատնտեսության մեջ՝ ագրոնոմիան, մերենայացումը և այլն: Գ. Վարդումյանը ազգագրական պահանջներին համապատասխան նկարագրել է տեղական գյուղատնտեսական գործիքների՝ առանձին ժամանակներում ունեցած ֆունկցիաները և պատճառարանելի դրանց աստիճանական վերացման պատմական պատճառները: Պատճառարանված են նմանապես հին արտադրամիջոցներից այն մի բանի գործիքների մեր ժամանակներում պիտա-

\* Գ. Վարդումյան, Լուեցինների նոր կենցաղը, Երևան, 1956: